

## Արձանագրություն N1

2020թ. սեպտեմբերի 25-ին կայացավ « Երևանի Վ. Պետրոսյանի անվան N51 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի հերթական նիստը, որին մասնակցում էին խորհրդի 7(յոթ) անդամները: Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր դպրոցի տնօրեն Լ. Ղասաբոլյանը:

### Օրակարգ

1. Հաստատության աշխատանքային ներքին կարգապահական կանոնների հաստատման մասին (զեկուցող՝ Լ. Ղասաբոլյան):
2. Ուսումնական հաստատության ներքին գնահատման մասին (զեկուցող՝ Կ. Զիրաբյան):
3. Հաստատության հաստիքացուցակի նախագծի հաստատման մասին (զեկուցող՝ Կ. Զիրաբյան):
4. Հաստատության աշխատողների դրույքաչափային (տարիֆիկացիոն) ցուցակին հավանություն տալու մասին (զեկուցող՝ Կ. Զիրաբյան):
5. Հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի նախահաշվի քննարկում (զեկուցող՝ Կ. Զիրաբյան):

Լսեցին – 1. Դպրոցի տնօրեն Լ. Ղասաբոլյանի զեկույցը կորոնավիրուսային հիվանդության պայմաններում «Երևանի Վ. Պետրոսյանի անվան N51 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին կարգապահական կանոնների մասին ( ներքին կարգապահական կանոնների հավելում ) :

Առաջնորդվելով ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 11- րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով տնօրենի կողմից ներկայացված հաստատության աշխատանքային կարգապահական կանոնների նախագիծը հաստատության կառավարման խորհուրդը

Որոշեց՝

1. Հաստատել տնօրենի կողմից ներկայացված հաստատության աշխատանքային ներքին կարգապահական կանոնների մասին նախագիծը:

2. Հանձնարարել հաստատության տնօրենին օրենքով սահմանված կարգով արձակել համապատասխան հրաման աշխատանքային ներքին կարգապահական կանոններ կիրառելու վերաբերյալ, որպես ներքին իրավական ակտի:
3. Աշխատանքային ներքին կարգապահական կանոններում ընթացիկ անհրաժեշտ փոփոխություններ կատարել օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Լսեցին – 2. Կառավարման խորհրդի նախագահ Կ. Զիրաքյանի զեկույցը ուսումնական հաստատության ներքին գնահատման մասին:

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով տնօրինության կողմից ներկայացված հաստատության ներքին գնահատման հաշվետվությունը կառավարման խորհուրդը

Որոշեց՝

Հավանություն տալ տնօրենի կողմից ներկայացված հաստատության ներքին գնահատման հաշվետվությունը:

Լսեցին - 3 Կառավարման խորհրդի նախագահ Կ. Զիրաքյանին:  
Տիկին Զիրաքյանը ներկայացրեց հաստատության հաստիքացուցակի նախագիծը և աշխատողների դրույքաչափային ցուցակը:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով տնօրենի կողմից ներկայացված հաստիքացուցակի նախագիծը կառավարման խորհուրդը

Որոշվեց՝

1. Հավանություն տալ տնօրենի կողմից ներկայացված 2020-2021 հաշվետու տարվա հաստիքացուցակի հայտին:
2. Հավանության տալ ներկայացված 2020-2021 ուսումնական տարվա աշխատողների տարիֆիկացիոն ցուցակին, ըստ որի ընթացիկ ուսումնական տարում դպրոցում՝
  - գործելու են 38 (երեսունութ) դասարաններ
  - սովորելու են 1085 (հազար ութսունհինգ) աշակերտներ
  - աշխատելու են 71 (յոթանասունմեկ) ուսուցիչներ

- աշխատելու են նաև այլ մասնագիտությունների մանկավարժներ և տեխնիկական սպասարկող աշխատողներ:

Լսեցին - 4 Դպրոցի տնօրեն Լ. Ղասաբօղյանի զեկույցը 01.01.2020թ-22.09.2020թ. հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի նախահաշվի մասին:

«Հանրակրթության մասի» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1- ին մասի 7- րդ կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով տնօրենի և գլխավոր հաշվապահի ներկայացված հաստատության ֆինանսատնտեսական գործունեության հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ հաշվետվությունը հաստատության կառավարման խորհուրդը

Որոշեց՝

Հավանություն տալ տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից ներկայացված հաշվետու ժամանակաշրջանի 01.01.2020 - 22.09.2020, ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը:

Կառավարման խորհրդի նախագահ՝  / Կ. Զիրաբյան/

քարտուղար՝  / Ռ. Մարտիրոսյան/